

ԿԱՌԼ ՖԵՐՏԻՆԱՆՏ ԼԵՀՄԱՆ-ՀԱՌԻՊԹԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՑՈՒԱՆՔԸ «ԲԱԶՄԱՎԷՊՈՒՄ»

ԺԹ. դարի առաջին կեսին հայ մտաւորականութիւնը քաղաքացիական էր Հայոց պատմութեանը, գրականութեանը, մատենագրութեանը: Անյայտ էր, սակայն, հնագոյն Հայաստանի գրչութիւնը, պատմութիւնն ու մշակոյթը, բացի այն, ինչ պատմում է Մովսէս Խորենացին: Եւ, ահա, երբ եւրոպական լեզուներով թարգմանուեց պատմահօր Հայոց պատմութիւնը (առաջին թարգմանութիւնը լատիներէնով 1723ին) եւ, այնուհետեւ, երբ Նաբոլէոն Պոնապարտի զինուորները գտան «Ռոզեթեան քարը», նկարագրուեցին Բեհիսթունեան ժայռի սեպագիր արձանագրութիւնները, յանկարծ նորովի իմաստաւորուեցին Մովսէս Խորենացու նկարագրած Վանտոսպ գաւառակի ուրարտական հնութիւններն ու սեպագիր արձանագրութիւնները, աւելին՝ դրանք դարձան նման գրութիւնների հնագոյն նկարագրութիւններից մէկը, եթէ ոչ առաջինը: Պատմահայրը ոչ միայն յստակ նկարագրում է դրանք, այլեւ ճշգրիտ թուագրում է Ք.ա. Թ. դարի վերջ Ը. դար, այն է՝ Ասորեստանի Շամիրամ (Շամուրամթ) թագուհու գործունէութեան ժամանակաշրջանով¹:

Ուշագրաւ է, որ Մովսէս Խորենացին իր տաղանդի ուժով կարողացել է անսխալ ի մի բերել այն յուշարձանները, որոնք այժմ անուանուում են ուրարտական՝ դրանք կապելով Շամիրամի անուան հետ²:

1 ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ, Պատմութիւն Հայոց (քննական քննգիրը Մ. Ա. քննադատի ու Ս. Յարութիւնեանի, աշխարհաբար թարգմ. եւ մեկն. Ստ. Մալխասեանի), Երեւան 1981, գիրք առաջին, ԺԶ.:

2 ՀՄԱՅԵԱՆԵԱՆ, Ս. Գ., Ուրարտական յուշարձանները հայկական աւանդութիւններում, «Հայկական էպոսը եւ համաշխարհային էպիկական ժառանգութիւնը», Երեւան 2012, 251-260:

Եւ ահա, պատմահօր նկարագրած այս հնութիւններն ուսումնասիրելու համար «Ֆրամսիայի ասիական ընկերութիւնը», Անտուան-ժան Սեն-Մարտենի նախաձեռնութեամբ, 1827ին Վան է գործողըղում հասնեցի քսանութամեայ պրոֆեսոր Ֆրիդրիխ Էդուարդ Շուլցին: Յր. Էդ. Շուլցը այստեղ ընդօրինակեց 42 սեպագիր արձանագրութիւններ, նկարագրեց Վանտոսպ գաւառակի հնութիւնները, աւելին՝ գրառեց այդ յուշարձանների հետ առնչուող աւանդութիւնները: Հայագիտութեան այս երախտաւորը սպանուեց Զուլամբերիկի լեռներում, Ադամակերտի մօտ, 1829ին, մի քուրդ ցեղապետի կողմից: Իր աշխատանքը, սակայն, հրապարակուեց 1840ին Մուլի աշխատասիրութեամբ. «Fr. Ed Schultz, Memoires sur le lac de Van et ses environs» խորագիրը կրող հատորով, «Journal Asiatique» հանդէսում: Սա, թերեւս, սեպագիր արձանագրութիւնների առաջին համահաւաքն էր աշխարհում, քանի որ դեռեւս ոչ իտալացի Փուլ-Էմիլ Պոտան, ոչ էլ Լայարտը չէին սկսել իրենց պեղումները Բուլլունջիքում (Նինուէ) եւ Խորսաբադում (Ասորեստանի արքայ Սարգոն Բ-ի կառուցած Դուր Շարուկին բերդաքաղաքը) եւ հին Արեւելքը դեռ պէտք է ուսումնասիրուէր հնագիտորէն³:

«Բազմավէպ»ը իր հիմնադրման առաջին իսկ համարներում հաղորդումներ տեղագրեց, որոնք նկարագրում էին Յր. Էդ. Շուլցի, Փուլ-Էմիլ Պոտայի ու Լայարտի կատարած աշխատանքները, Ժան-Ֆրանսուա Շամբուլիոնի գիւտը եւ երբեք էլ չդադարեցրեց, ինչպէս հին Մերձաւոր Արեւելքի, այնպէս էլ աշխարհի նշանաւոր հնավայրերի ուսումնասիրութեանը վերաբերուող հաղորդումների հրապարակումը⁴:

3 Հմմտ. ЛЕМАН-ХАУПТ, К. Ф., *Вступительная лекция по истории и культуре халдов*, «Труды Тбилисского гос. университета», № 6, 245-246:

4 Ինչպէս օրինակ. «Նինուէի աւերակները», «Բազմավէպ», 1844, թիւ 8, 126-127, «Բուենոս-Այես մշամագիր», «Բազմավէպ», 1845, թիւ 3, 42, «Նոր գտնուած հնութիւն մը», «Բազմավէպ», 1851, թիւ 9, 138-139, «Բաքիլացոց պետութեան կառավարութիւնը, սովորութիւնն ու կրօնը», «Բազմավէպ», 1862, 302-309, «Ասորեստանեաց վաճառականութիւնն ու արուեստը», «Բազմավէպ», 1862, թիւ 11, 339-344, «Պեղումն է Պոմպէա», «Բազմավէպ», 1863, թիւ 5, 167-168, «Բուենոս-Այեսի կամ սեպագիր արձամբ յԱյրաբատեան աշխարհի», «Բազմավէպ», 1865, թիւ 7, 232-233, «Պիրս Նեմրութ, Նինուէի եօթմ մարդակաց տաճարը», «Բազմավէպ», 1870, թիւ 6, 166-167, «Էդուարդական դամբարաններ», «Բազմավէպ», 1871, թիւ 4, 120-122, «Պեղումն Պ. Շիմամի ի Տրայա», «Բազմավէպ» 1874, հատ. I, 347-351, «Բուեն-

Շուրջից յետոյ Հայաստանի հինարեւելեան յուշարձանները սկսեցին ուսումնասիրել երկու գերմանացի գիտնական ընկերներ՝ Վոլտեմար Պելլը եւ Կառլ Ֆերտինանտ Լեհման-Հաուպֆը: Վոլտեմար Պելլը քիմիկոս էր եւ աշխատում էր Գետաբեկի պղնձահանքերում՝ Սիմսոնների կազմակերպութիւնում: Այստեղ էլ նա, 1890ին, սկսեց իր հնագիտական պրպտումները: 1891ին, ճանապարհորդեց Գանձակի, Շրեւանի, Վանի ու Էրզրումի նահանգներով, գտաւ եօթ նոր սեպագրեր. չորսը՝ Արտամէտում, մէկը՝ Բեշիշ գետի մօտ, մէկը՝ Իշխանագոմում եւ եւս մէկը՝ Վանում⁵:

Լեհման-Հաուպֆը (նկար 1) ծնունդ էր 1861ին, Համբուրգ քաղաքում, իրաւագիտութեան եւ հնադարեան մշակոյթների պատմութեան ուսուցչապետ էր: Հայաստանում աշխատում էր Գերմանիայի Վիլհելմ կայսեր գիտութիւնների ախադեմիայի եւ այլ հաստատութիւնների տրամադրած միջոցներով⁶:

1898 եւ 1899 թուականներին, նրանք ճանապարհորդեցին Հայաստանով՝ նպատակ ունենալով ուսումնասիրել երկիրը, գտնել նոր արձանագրութիւններ, ճշգրտել հին ընդօրինակութիւնները: Յայտնաբերեցին 60 նոր սեպագիր՝ Հայաստանում դրանց թիւը հասցնելով 140ի⁷:

Հայաստանի հնութիւններին նուիրուած նրանց գերմաներէն յօդուածներն անմիջապէս թարգմանուում ու հրապարակուում էին հայկական մամուլում՝ հիմնականում «Համդէս ամսօրեայում»⁸: Սակայն ընկերները գծուեցին եւ հայկական մամուլը լի էր յուզմունքով, քանի որ ենթադրուում էր, թէ գիտնականները

ռաձեւ արձանագրութիւն՝ Հայաստանի» (Բաղուած ի Լըմարմանէ), «Բազմավէպ», 1875 եւ 1876, հատ. ԼԴ, 132-140, 199-205, 328-332, «Արքունի գրքատուն Ատրնաստանաց», 1877, հատ. ԼԵ, 268-271, «Աւերակ Նիմուշի», 211-276, «Պեղումք յիթակէ կղզի», «Բազմավէպ», 1879, հատ. ԼԷ, 156, Էմկելման, «Պղնձ գլուխ մը ի Հայաստան գտնուած», «Բազմավէպ», 1883, հատ. ԽԱ, 130-141 եւ շատ ուրիշ:

5 ԼէՕ, Հայոց պատմութիւն (հին պատմութիւն), Թիֆլիս 1917, վերաբրատարակուած է 1966-ին՝ ԼէՕ, «Երկերի ժողովածու», հտր. Ա., Նրեւան 1966, 14-15:

6 ԼէՕ, Հայոց պատմութիւն (հին պատմութիւն), Նրեւան 1966, 16:

7 Անդ:

8 Տե՛ս օրինակ, ԲՆԼՔ, Վ., Մաննացոց տէրութիւնը, «Ազգագրական հանդէս», 1895, գիրք Ա., 27-36 (թարգմանութիւնը Լեւոն Բաբայեանի): Տեղեկագիր քննական ուղեւորութեան Բելիի եւ Կ. Ֆ. Լեմանի, «Հանդէս Ամսօրեայ», 1899, թիւ 9, 281-284:

կը դադարեցնեն իրենց ուսումնասիրութիւնները⁹, որոնք լոյսի մի շիթ էին սփռում Հայաստանի հին պատմութեան էջերի վրայ:



Նկար 1. Կ. Ֆ. Լեհման-Հաուպը

Այս աշխատանքներն ամփոփող գրքի հրապարակումը հայերէնով նախաձեռնեց «Բազմավէպ»ը այն ժամանակ, երբ 1907ին լոյս տեսաւ Լեհման-Հաուպի «Materialen zur Älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Mit einem Beitrage Arabische Inschriften aus Armenien und Diyarbekr von Max van Berchem», Berlin «Weidmannsche Buchhandlung», խորագիրը կրող գիրքը:

Գիրքը հրապարակուեց «Բազմավէպ»ի 1908-1909 համարներում¹⁰ Յարութիւն Աստուրեանի թարգմանութեամբ որոշ կրճատումներով, առանց պատկերների. «Պրոֆ. Լեւանի «նիւթեր Հայաստանի հնագոյն պատմութեան» (յաւելումս զոկտ. Մաքս ֆան Բերշեմի, «Արաբական արձանագիրք Հայաստանէն եւ Տիարպեֆիքէն») խորագրով»¹¹:

⁹ «Բազմավէպ», 1908, քիւ 3, 109:

¹⁰ «Բազմավէպ», 1908, քիւ 3, 109-114, քիւ 5, 197-199, քիւ 7, 299-302, քիւ 12, 550-554, «Բազմավէպ», 1909, քիւ 1, 8-11, քիւ 2, 67-73, քիւ 3, 102-104:

¹¹ «Բազմավէպ», 1908, քիւ 3, 109:

Այս աշխատանքում Կ. Ֆ. Լեհման-Հառուլթը հրապարակում է Հայաստանում իր կատարած գիտերը՝ արձանագրութիւնները, նկարագրում է Թօփլաք կալէի («Կաւաքերդ», Ամրական քարանձաւ, որ ըստ հայոց սկզբնաղբիւրներ¹² ուրարտական Ռուսախի-նիլի կոչուած ամրոցն է) պեղումները, վերնագիր առ վերնագիր վերլուծում է քարարձանները, որոնցից մէկը այժմ պահուած է Վրաստանի Պատմութեան թանգարանում¹³ ջրանցքաշինութիւնը, ճարտարապետութիւնը, կաւագործութիւնը, մետաղագործութիւնը, մանրաքանդակը¹⁴ եւ այլն:

Մանրամասն անդրադառնում է արծաթի սեւադման տեխ-նիկային՝ այն հետազօտելով Վանի արծաթագործների մօտ: Նա ենթադրում էր, որ Վան քաղաքում տարածուած այդ արուեստը ժառանգուել է Վանի թագաւորութիւնից (Ռուսախիլիում իր գտած անօթներէն մէկի մէջ ծծմբարծաթ յայտնաբերուեց, որով եւ սեւադում են արծաթը) եւ, այնուհետեւ, Վանից անցել է Տուլայ, Տուլայից էլ՝ Եւրոպա¹⁵: Անդրադառնալով պատկերա-գրութեանը՝ ուրարտուհիների կերպարը եւ հագուստը համեմա-տում է Հարաւային Կովկասի բնակչուհիների՝ մասնաւորապէս վրացուհիների հետ¹⁶: Չնայած այս հանգամանքին, Լեհման Հառուլթը ուրարտացիներին, որոնց անուանում էր խալդեր, Հա-յաստան է բերում Փոքր Ասիայից՝ միաժամանակ ուրարտական զուգահեռներ գտնելով միկենեան մշակոյթում¹⁷: Ուշագրաւ է, որ «Բազմավէպ»ի խմբագիրները Լեհման-Հառուլթի հրապարակուող «Նիւթերին» զուգահեռ եւ հարեւանութեամբ դնում էին Նազա-րէթ Տաղաւարեանի հին Հայաստանին՝ մասնաւորապէս Վանի թագաւորութեանը նուիրուած ընդարձակ յօդուածը, որ լրաց-նում է «Նիւթերից» եկող տեղեկատուութիւնը եւ մի ամբողջա-կան պատկերացում է տալիս Վանի թագաւորութեան մշակոյթի, եւ այդ մշակոյթի յետագայ զարգացման մասին:

«Բազմավէպ»ի այս նախաձեռնութիւնն անչափ կարեւոր ե-ղաւ Հայաստանում Ուրարտուի հնագիտութեան եւ մշակոյթի ու-

12 ՅԱ.ԿՈՐԵԱՆ, Թ., ՄԵԼԻԻՔ-ԲԱՆՇԵԱՆ, ՍՏ., ԲԱՐՍԵՂԵԱՆ Հ., Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտր. 1, Երևան 1986, 220-221:

13 ПИОТРОВСКИЙ Б.Б., Ванское царство, Москва, 1959, стр. 187.

14 «Բազմավէպ», 1909, քիւ 1, 8-11, «Բազմավէպ», 1909, քիւ 2, 67-73:

15 «Բազմավէպ», 1909, քիւ 1, 11:

16 «Բազմավէպ», 1909, քիւ 1, 8-11:

17 «Բազմավէպ», 1909, քիւ 3, 102-104:

սումնասիրութեան առումներով: Մասնաւորապէս, այս նիւթերը լայնօրէն օգտագործեց Լէոն, երբ նա գրում էր իր «Վանի քաղաքութիւնը» գիրքը, 1915ին եւ յետոյ, երբ շարադրում էր իր «Հայոց պատմութեան» առաջին հատորը, որոնք լի են ընդարձակ մէջբերումներով եւ յղումներով «Բագմավէպ»ի առ այն համարներն ու էջերը, որտեղ թարգմանուած էին «Նիւթերը»¹⁸: Լէոյի այս երկու մենագրութիւնները, որոնք նախորդում էին Գ. Ա. Ղափանցեանի «Ուրարտուի պատմութեանը»¹⁹, գումարուելով Հ. Սանդալ-ջեանի աշխատութիւններին²⁰, եղան այն հիմքը, որի վրայ բարձրացաւ հայալեզու ուրարտագիտութիւնը:

ՍԻՄՈՆ ՀՄԱՅՆԱԿԵԱՆ

18 ԼէՕ, Վանի քաղաքութիւնը, Թիֆլիս 1915, 113, 131, 318, 323, 328, 333, 337:

19 ՂԱՓԱՆՑԵԱՆ, Գ., Ուրարտուի Պատմութիւն, Երեւան 1940:

20 ՍԱՆՏԱԼՃԵԱՆ ՅՈՎՍԷՓ ՎՐԴ., Ասորեստանայ եւ պարսիկ սեպագիր արձանագրութիւնք, Վիեննա 1901: ՍԱՆՏԱԼՃԵԱՆ ՅՈՎՍԷՓ ՎՐԴ., Նորագիւտ ուրարտական սեպագիր արձանագրութիւնք, «Հանդէս ամսօրեայ», 1913, 407 եւ այլն:

Summary

REFLECTION OF CARL FRIEDRICH LEHMANN-HAUPT'S ACTIVITY IN “BAZMAVEP”

SIMON HMAYAKYAN

In 1827 the French “Asiatic Society” send Prof. Fr. Ed. Schulz on a mission trip to Van for the study of cuneiform inscriptions and Ancient Eastern sites in Vantosp region, described by Movses Khorenatsi. There he copied 42 cuneiform inscriptions, described antiquities of Van and paraphrased the stories referring to them. After the scholar’s early death, his work was continued by other researchers, including C. F. Lehmann-Haupt, who worked with remarkable devotion. The Armenian intellectuals eagerly anticipated publication of Lehmann-Haupt’s and his colleague’s, Voldemar Belk’s works. Those were translated and published in the Armenian journals. In particular, the first fundamental work of C.F. Lehmann-Haupt called “Materialen zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Mit einem Beitrage Arabische Inschriften aus Armenien und Diyarbekr von Max van Berchem”, Berlin “Weidmannsche Buchandlung”, 1907 was published in the issues of journal “Bazmavep” (1908-1909).

The abovementioned initiative contributed to formation and further development of the Urartology in Armenia.